

## ԿԱՆԱՅՔ ՀԱՅՐԵՆՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿ

Հայրենների ուսումնասիրությունը Մ. Արեղյանին բերել է մի շարք եզրահանգումների, որոնցից է նաև հետևյալը. «Հայրենների մեծագույն մասը, բնականաբար, տղամարդի հորինվածքներ են. կան բավական թվով հայրեններ էլ, որ ընդհանուր բնավորություն ունեն, այսինքն՝ կարող են և տղամարդի և կնոջ համարվել և դժվար է որոշել դրանց հեղինակի սեռը: Բայց կան այնպիսիները, որոնք պարզապես կնոջ երգեր են...» (էջ 177): Հայրենները համարելով «քազմաթիվ հեղինակների բանաստեղծություն»՝ Արեղյանը նկատել է. «Արդ, հայրենների մեջ ևս կան այնպիսիները, որոնք երգվում են կնոջ բերանից: Դրանք բանաստեղծուհիների հորինած երգերն են, կամ թե հին երգչուհիները տղամարդկանց հորինած երգերը վերամշակելով՝ դարձրել են կնոջ երգեր» (էջ 177): Սակայն մեծ գիտնականը խորամուխ չի եղել այս հարցի քննության մեջ, այլ իր ասելիքն ամփոփել է ընդհանուր դիտումներով: Հայրենների հեղինակի հարցի համար չափազանց կարևոր այս խնդիրը արժանի է հատուկ ուշադրության, քան արժանացել է առ այսօր: Ուստի կնոջ բերանից աաված հայրենները այստեղ դարձնում ենք առանձին խնդրո առարկա՝ ի ցույց դնելով այն հանգամանքը, որ Քույակը չէր կարող լինել այս հայրենների հեղինակը:

Գաղտնիք չէ, որ հայ իրականության մեջ հնուց ի վեր եղել են գուսաններ և վարձակներ: Դեռևս Մովսես Խորենացին հիշատակել է Նազեմիկ անունով վարձակի մասին, որը նվագում ու երգում էր խնջույքի ժամանակ. «Եւ եղև յատուր միում կոչել զնա յընթրիս Բակրոյ նահապետին Միւնեաց. և յուրախանայն գինով, տեսեալ Տրդատայ զկին մի, զի յոյժ գեղեցիկ էր և երգեր ձեռամբ, որում անուն էր Նազհիմիկ՝ տրփացաւ և ասէ ցԲակուր. «Տո՛ւր ինձ զվարձակս զայս»։ և նա ասէ. «Ոչ տամ, զի հարճ իմ է»։ Իսկ Տրդատայ բուռն հարեալ ի կինն՝ յինքն քարշեալ ի բազմականն, շամբշեալ վառաշէր ըստ օրինակի երիտասարդի անարգել տարփաւորի» (Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Բ, ԿԳ): Խորենացին իր պատմության մեկ այլ հատվածում կրկին հիշատակել է վարձակների՝ կին երգչուհիների մասին. «...այլ անճանաճ եղեալ, պարծելով հանապազ ի գինարբուս և երգս վարձակաց...», որն, ի դեպ, Մալխասյանցը այս անգամ սխալմամբ «վարձկան երգիչ» է թարգմանել: Պարուհի վարձակի տիպար է նաև Մալումեան, որ դարձավ Հովհաննես Մկրտչի գլխատման պատճառը: Միջնադարյան մանրանկարներից մեկում պատկերված է մի կին, որի ձեռքին կա լարային երաժշտական գործիք, որի տակ գրված է. «Կին մի որ կու զարնէ տառայալու» (այս մասին տե՛ս Վ. Եղիազարյան, Բանասիրական որո-

նուններ, Ե., 2003, էջ 67): Հայտնի է, որ «Մասնա ծոեր» էպոսը պատմվել է նաև կին ասացողի կողմից:

Իսկ մի հայրենի մեջ ուղղակի վկայություն կա այն բանի, որ հայրենի են ասել նաև կանայք: Խոսքը ԱԾԱ, 245-257 հայրենի մասին է, որտեղ լուսինը բարև պիտի տանի գոգալին, որը ծառի տակ նստած խմում և հայրենի է ասում. այստեղ մտածելը, թե հայրենի ասողը կին չէ, անհնարին է, քանի որ վերևում հստակ նշվում է, որ բարևը տանելու է գոգալին, որը նստել ու հայրենի է ասում: Այս իրողությունն ակնհայտ է ոչ միայն այս հայրենում, այլև կան բազմաթիվ հայրեններ, որոնք ասվում են կնոջ անունից, այլ կերպ ասած՝ որոնց հեղինակը կին է: Մտորև քննենք մեր ուշադրությանն արժանացած այդօրինակ հայրեններ:

*- Ատ վո՞վ է երդիկս եկեր,  
Որ օտար հողըն կու տղայ.  
Թէ իմն ես՝ նա վա՛ր արի,  
Թէ օտար ծաղիկ՝ նա գրնա՛.  
- Ո՛չ քուկն եմ՝ ի վար գալու,  
Ո՛չ օտար ծաղիկ՝ գրնալու.  
Եկեր եմ ի քո սիրտուտ,  
Ո՛չ գալու եմ, ո՛չ գնալու (Ա/Ա, 41-48):*

Այս հայրենում ծավալվել է երկխոսություն, և հարցադրումն արված է կնոջ կողմից, որի երդիկը տղամարդ է եկել. նրան թույլ է տալիս երդիկից իջնելու, եթե իր սիրածն է, իսկ եթե օտար տղամարդ է, արգելում է իջնել: Ապա և հետևում է տղամարդու պատասխանը՝ յուրահատուկ փիլիսոփայությամբ, սպառնալի լինելով պահելու միտումով: Այսինքն՝ այս դեպքում մենք գործ ունենք մի հայրենի հետ, որը կնոջ կողմից առաջադրած հարցադրում է, որին հետևում է այր մարդու պատասխանը: Հետաքրքիրն այն է, որ հայրենի երգաշխարհում սա միակը չէ: Կամ նմանօրինակ այլ հայրեններ ևս, որոնց մասին այստեղ հարկ չենք համարում մանրամասնել: Սակայն պետք է նկատել նաև, որ կան այլ երկխոսություն-հայրեններ, որոնց հարցադրումն արված է տղամարդու կողմից, իսկ պատասխանը, բնականաբար, տրվում է կնոջ անունից:

*- Աղոտ՛ր, քեզ բանիկ մ՝ ասեմ,  
Հօրու ահուն չեմ իշխեր ասել.  
Անոր համար չեմ ասեր՝  
Դուք հարուստ էք ու մեք՝ տառայել:  
- Ասա՛, կտրի՛ճ, մի՛ վախեր.  
Շատ հարուստ է տառայելացել.*

*Անշափ հարստի դատրիկ*

*Տառալեկի ծոցիկն է պառկել (ԱԲ, 117-124):*

Այս համգամանքն ինքնին խոսում է այն մասին, որ հայրենների այն հարցադրումները, որոնք արված են կնոջ անումից, պետք է, որ կանանց հեղինակած հայրեններ լինեն: Այս հարցը, անշուշտ, կարելի է դիտել նաև հակառակ կողմից, թեև այն մեզ քիչ հավանական է թվում: Իսկ այդպես դատելու դեպքում անգամ գործ ունենք հակառակ երևույթի հետ, երբ տղամարդն է հարցադրման հեղինակը, այսինքն՝ ամեն դեպքում հաշվի պիտի առնել, որ կամ առաջին, կամ երկրորդ դեպքում հայրենի հեղինակը կին է, նայած թե որ կողմից է դիտվում հարցը: Այնուամենայնիվ, մի դեպքում հայրենի հեղինակը կին պետք է լինի: Հաշվի առնելով վիճելիության հնարավորությունն այս դեպքում՝ շրջանցները երկխոսություն-հայրենները և բնենք այնպիսիք, որոնց հեղինակները հաստատապես կին են:

*Ամ ո՞վ էր հաներ վարեք*

*Ձիր եարուկն, որ ես վարեցի.*

*Տարի ու անհուն լեռներն*

*Անցուցի ու շատ մի լացի.*

*Դարձայ՝ տարերուն ասի,*

*Չորերուն ապրսպորեցի.*

*- Ուր երթաս՝ բարով կենաս,*

*Ես լալով իմ կեանքս անցուցի (ԱԲ, 15-22):*

Թեև այս հայրենի մեջ որոշակի չի նշվում, թե ով է իր յարին տարել ճանապարհ դրել, ապա լաց եղել նրա կարոտից, սակայն սխալված չենք լինի, եթե ասենք, թե սարերի հետ զրուցողը, իր հեռավորին բարի մաղթանք հղողը տարագիր տղամարդու կինն է, որը լալով սպասում է ամուսնու դարձին: Եթե այս հայրենում դա այնքան էլ որոշակի չի, այլ ենթադրելի է, ապա մեկ ուրիշ հայրենում ասվածն ուղղակի անհերքելի է, քանի որ ամեն ինչ պարզ ասված է կնոջ անումից:

*Մրտիկս է եղեր դալան,*

*Բաժնելու թխտիկ կու գրէ.*

*Կանչեմ՝ Ոհ, իմ Տէր Աստուած,*

*Չամենայն դարիս դու պահէ.*

*Ղարիս գնացած ունիմ,*

*Իմ տարտերն զիս կու լալիէ.*

*Շալայ թէ շուտով դառնայ,*

*Թէ չէ իմ հոգիս կու ելնէ (ԱԲ, 49-56, ԱԸ, 1-8, ԱԿԱ, 66-73):*

Սպասման ու կարոտի զգացումը համակել է «դարիս» ունեցող կնոջ սիրտը, որին տանջում են դարդերը: Կանացի սրտից քիսած մաղթանք է, աղերսախառն աղաչանք, որ Աստված պահպանի բոլոր պանդուխտներին, իսկ հայրենի ավարտն էլ կանացի ցանկության ու կարոտի կանչի արտահայտություն է. երանի վերադառնա իր ցանկալին, թե չէ ինքը կմեռնի կարոտից: Անշուշտ, այս դեպքում մենք գործ ունենք մի հայրենի հետ, որի հեղինակը ակնհայտորեն կին է. հակառակը պնդելն ուղղակի անհնարին է:

*Գիշերս ես ի դուրս ելայ,  
Շատ աստղունք ու բարկ լուսնկայ.  
Մէկիկ մի դարիս կարիճ  
Դռնէ-դուռ ընկեր՝ կու դողայ.  
Հարսնուկ մ՝ Աստուծոյ սիրուն,  
Իւր կպղած դուռն կու բանայ.  
- Արե՛կ, որ զքեզ ծոցս առնեմ՝  
Միճոյր քո կապան չորանայ.  
Արի՛, լուկ հանցկում գնա,  
Որ ծոցուս տէրըն չիմանայ.  
Թէ չէ կապանէ զքեզ,  
Արիւնով ձեռվին լուանայ (ԱԺԲ, 1-12):*

Ահա մի հայրեն էլ, որի հեղինակը, թերև, օտարության մեջ գտնվող տղամարդուն գաղտնի իր ծոցն առնող կինն է: Կանացի հոգեբանության արձագանք է այն, որ հարսը իր փակած դուռը բացում է դռնեդուռ ընկած պանդուխտ կտրիճի առջև, սակայն նրան ծոցն է առնում այնպես գաղտնի, որ իր ծոցի տերը՝ ամուսինը, հանկարծ չիմանա, թե չէ կապանի օտարական կտրիճին: Այս հայրենն ասվել է կնոջ կողմից, ուր ակնհայտ երևում է նաև կանացի հոգեբանությունը՝ արտահայտված գաղտնի սիրվելու ցանկությամբ: Կանացի հոգեբանության մի յուրահատուկ դրսևորում է նաև սիրո անբավարարությունից զանգատվելը.

*Հագեր ես քեմխա կապայ,  
Ֆերեճէա զերպապ սերասար.  
Ով տեսնում՝ տի գանկատիմ,  
Թէ իմ եարն ինձ պագ մի չի տար (ԱԴ, 9-12):*

Այս հայրենում կինը զանգատվում է իր յարից, որ դարձել է քահանա, հագել է կրոնավորի զգեստ և այլևս չի համբուրում իրեն: Սիրվելու անհագ ցանկությունն այս դեպքում արտահայտվել է զանգատվող կնոջ շուր-

քերով: Անկարելի է կարծել, թե կրոնավորի զգեստ կալող էր հագած լինել կինը, իսկ տղամարդը զանգատվեր, թե իրեն չի համբուրում փարաջա հագած իր սիրուհին: Ուրեմն՝ այս հայրենը ևս անվերապահորեն կնոջ կողմից է ասված:

*Ժամ-ժամ կու գայ ի վերայ,  
Որ ելնում կանչեմ, քե՛՛ Ո՞ւր է նա.  
Ն՛ ալվայ երեսիս ջրրեմ  
Կու վախեն, քե մարդ իմանայ (ԱԽԲ, 41-44):*

Իսկ այս հայրենում քիչ է մնում՝ վեր կենա ու կանչի, թե ուր է իր յարը, քանի որ զգացմունքը մի պահ մթագնում է իր բանականությունը, ապա հաջորդ պահին ամոթի զգացումը ետ է պահում նրան. «երեսի ջուր» արտահայտությունը հենց ամոթն է: Սիրո հարցում գաղտնի սիրելու կողմնակիցը կինն է, տղամարդն այս հարցում ավելի ազատ է, նրան չի ճնշում հասարակական կարծիքը, նա իր զգացմունքով է առաջնորդվում. կինն է, որ որոշակիորեն բարդությամբ փոխված է և չի ուզում, որ իր սիրո պատմությունն իմացվի:

*Իմ եարս է հագեր քթան,  
Երթեցովն եկեր սուտ ի բան.  
Գիտեմ, քե ի բան եկեր,  
Նայ եկեր հոգուս հոգեհան (ԱԽԷ, 17-20):*

Ահա մի հայրեն էլ, որտեղ յարը երդիկից ներս է մտնում սուտ պատրվակով, իսկ սիրած կինը հասկանում է, որ նա եկել է իրեն հոգեհան անելու, այլ ոչ թե գործով: Պարզ է, որ այստեղ ևս հեղինակը կին է:

*Ես ծիծրանիկ պիտեի,  
Բունս ի ձեր տունն դնեի.  
Չազ հանեի, ծրուլըռայի,  
Քո սիրովդ կիշտանայի. (ԱԽԸ, 23-26):*

Հայրեններում բազմաթիվ անգամներ արտահայտվել են իդձեր ու ցանկություններ նաև տղամարդկանց կողմից, բայց այս դեպքում կինն է ցանկություն հայտնում՝ ծիծեռնակ լինել, բուն դնել սիրածի տանը, ձազ հանել և կշտանալ ցանկալիի սիրով: Չենք կարծում, թե տղամարդը կասեր՝ «Չազ հանեի»:

*Եկին ու խապար բերին,  
Թե քո եարն եղեր հարեղա.*

*Փուշ արմացքքն զիս պատեց,  
Թէ նայ ո՞նց եղաւ հաքեղա.  
Բերնիկն էր շաքրի սովոր,  
Աճապ ո՞նց կերաւ նա բակլայ.  
Աճիկն էր շապկի սովոր,  
Աճապ ո՞նց հագաւ նայ վալայ. (ԱԽ, 17-24, ԱԿԳ, 73-80):*

Այս հայրենն էլ բացահայտ կնոջ կողմից է սալված: Լուր են բերել, որ իր յարը դարձել է արեղա. անշուշտ, արեղա դարձողը տղամարդ է, իսկ լուր ստացողը և այս երգն ասողը կին է, որը վայելել է այդ տղամարդու սերը, և զարմանքով է ընդունում նրա արեղա դառնալու լուրը: Սա այն դեպքն է, երբ հնարավոր չէ պնդել, թե արեղա դարձողը կին է, ուստի և չի կարելի դույզն-ինչ մտորել, թե հայրենի հեղինակը կարող է տղամարդ լինել:

*Իմ եարն 'ի ես մեկտեղ եկաք,  
Բռնեցաք մեք զԱստուած վկայ.  
Մեծ դալ ու երդումն արաք՝  
Գօթենայ՝ ով սէրն ուրանայ.  
Խօշ եար, թէ ուրանաս դուն զիս,  
Ստեղծողէն զաւալ քեզի գայ.  
Ջերայ սիրու տէր արիր,  
Այս խալխին լեզուն ի վրայ. (ԱԽԲ, 19-26):*

Այս հայրենը, թեև մենք հսկված ենք կարծելու, թե հեղինակը կին է, սակայն մտորելու տեղիք տալիս է: «Խալխի լեզուն» այստեղ ակնարկում է բամբասանքը, որից խորշում է հիմնականում կինը, սակայն չի բացառվում նաև՝ տղամարդը: Այսինքն՝ եթե կան հայրեններ, որոնցում հեղինակը կին է, բայց որոշակի չի ընդգծվում այդ հանգամանքը, բայց և կան հայրեններ էլ, որտեղ ուղղակի բացառվում է, որ դրանց հեղինակը կին չլինի, ինչպես վերևում հիշված, ասենք, ԱԽ, 17-24 հայրենը:

*Գիշերս ես ի դուրս ելայ,  
'Բ ի յերկինքն ի վեր մայեցայ.  
Լուսին ալ կամար կապել  
'Բ ի Հռոմք ի վար կու գնայ.  
Լուսի՛ն, քո արևտ ասեմ,  
Պահ մի կաց՝ մինչոր լուսանայ.  
Երկու գանգատ ունիմ,  
Քեզ ասեմ, լուկ ալլվի գնայ.  
Գնայ 'ի իմ եարին ասայ,*

*Թէ՛ Ղարիպ ունիս հա յ կու գայ.  
Հոգին ալ կլափան առել,  
Ի աշլիմ քոյ գալուտ կու մնայ. (ԱԽԲ, 57-68):*

Այս հայրենում ևս ակնհայտ է պանդուխտ ամուսնուն սպասող կնոջ խոսքը, որը լուսնի միջոցով զանգատ է ուղարկում իր ամուսնուն, որ շուտ վերադառնա, իր աչքերը կարտու են նրա դարձին:

*Եկին ու խապար բերին,  
Թէ ելեր մանչուկդ՝ կու գայ.  
Եկէ՛ք, մեր ի դեմ երթանք,  
Որ նորա սիրտն չի մնայ.  
Պաքնինք զիր կարմիր երեսն,  
Որ աշխարհս չէ գին նորա.  
Առնունք զիր ոտից փոշին,  
Ի՛նչի աչերս քաշենք բութիայ. (ԱԽԲ, 77-84, ԱԽԲ, 9-16):*

Իսկ այս հայրենում կինը լուր է ստացել, որ իր սիրած երիտասարդը վերադառնում է, նա առաջարկում է, որ գնան նրան ընդառաջ, համբուրեն նրա երեսը, առնեն նրա ոտի փոշին ու աչքերին քսեն՝ որպես աչքի դեղ: «Մանչուկ» բառը ունի վճռորոշ նշանակություն հեղինակի որոշման հարցում:

*Գնամ ու գնամ կասեր  
Իմ մանչուկն, ես աւտալու չ'ի.  
Երբ «Բարով մնայ» ասաց,  
Ես աւօտ-չաւօտ մնացի.  
Երբ ոտքն ի զանկուն եղիր,  
Ես հայրան ի վայր մնացի.  
Այլ բան չի կարցի ասել.  
- Ուր երթաս՝ ճանփեկտ ի բարի. (ԱԽԴ, 89-96):*

Այս կինն էլ չէր հավատում, երբ իր մանչուկը ասում էր, թե պիտի գնա, իսկ երբ մնաս բարով ասաց ու ոտքն ասպանդակին դրեց, կինը զարմացավ ու որևէ բան չկարողացավ ասել, այլ միայն բարի ճանփա մաղթեց հեռացողին:

*Այն ճանփովն, որ դուռ երթաս՝  
Վարդ ու մուրտ առջևտ բուսնի.  
Այն քաղաքն, որ դուռ մտնուս՝*

Գրօղի ծայնն չի հասնի.  
Այն մեծիսն, որ դու նստիս՝  
Գաւաթներդ զինով լցուի.  
Ծովերն այլ զինի դառնայ,  
Ու նաւերն՝ տօտօղանի (ԱԽԴ, 97-104):

Մաղթանք-հայրենի նմուշ է այս, որ ասված է կնոջ շուրթերով իրենից հեռացողին՝ քերև, օտարություն մեկնողին: Այսպիսի ցանկություններով մաղթանքը, բնականաբար, լքող-հեռացողին չի ուղղված, այլ օտարության մեկնող հարազատին:

Կամացի բարձր ու անհաս սիրո զգացողությունն է արտահայտված հետևյալ հայրենում.

Ամուր եմ քարիտ նման,  
Որ մրժիկն ի յիս չի բանի.  
Բարձր եմ քույս ամպիտ նման,  
Որ ոչ ով ի յիս չի հասնի.  
Աղեղն եղեննի լինի  
Ու լարն ի վերայ գալենի.  
Քաջօղն քաջորդի լինի,  
Հապա քե իմ սիրուն հասանի (ԱԽԴ, 159-166):

Կհինը զհտակցում է, որ ինքը պիտի անհաս ու հեռավոր թվա, չդառնա մինչև վերջ հասանելի ու մատչելի, որ հետաքրքիր լինի և առաջացնի քաջորդու ձգտումը դեպի սիրած էակը, որին հասնում է աղամարդը՝ որպես աղեղից նետված նետ: Պարզ է, որ հայրենն ասված է կնոջ կողմից:

Ամ երեստ է՞ր է դեղնել  
Դ՛ երեսիտ գունն գնացեր.  
Գէմ քո մանչն չէ մեռել  
Կամ օտար երկիր գնացեր.  
Թէ ես լամ՝ նա հաղ ունի,  
Որ գիտեմ՝ ինչ եմ կորուսել.  
Կորել է իմ հոգուս հոգին  
Դ՛ անհոգեկ ես եմ մնացել (ԱԽԷ, 93-100):

Արեղյանն այս հայրենի մասին գրել է. «...մի կին մի ուրիշին ուղղած հարցման ձևով հայտնում է, թե ինքը որ լավիս է, իրավունք ունի, քանի որ իր հոգու հոգին կորել է. մինչդեռ իր բարեկամուհին ոչ մի հիմք չունի արտասվելու, քանի որ նրա յարը ոչ մեռել է, ոչ օտար երկիր գնացել: Ամբողջ

տաղն ուրեմն ասված է առաջին կնոջից» (Մ. Աբեղյան, հ. Բ, էջ 120): Այս դեպքում էլ պարզապես գործ ունենք կնոջ կողմից երգվող հայրենի հետ՝ անկախ այն բանից՝ առաջի՞ն, թե՞ երկրորդ կինն է ասողը:

*Գիշեր՛ը, ամ կամկար եկոյ,  
Տարեկ մ'ալ եղիր, թէ կարես.  
Իմ եարքս ընծի հուր եկեր  
Ձէտ հազար տարու՝ թէ գիտես.  
Առաւօտ, դու գատ կանգնէ,  
Որ զմեզ սախըն չափրես.  
Մուրք լուսն ալ վրայ բերես,  
Ձիս ու զիմ եարքն բաժանես (ԾԱ, 371-378, Ա/Կ, 65-72  
Ա/ԶԲ, 157-164, Ա/ԶԳ, 601-608):*

Այս հայրենի մեջ, անշուշտ, կա վիճելու տեղ այն մասին, որ կարող է մասն տղամարդ լինել երգիչը, բայց քիչ հավանական է, որ կինը հյուր գնար տղամարդու տուն, իսկ մա խնդրեր, որ գիշերը երկար տևի, առավոտը ուշ գա, որ իրենք վայելեն իրենց սերը: Կարծում ենք, ավելի շատ հավանական է, որ հայրենի հեղինակը կին է: Նույն մոտեցումն ունենք մասն հետևյալ հայրենի դեպքում.

*Աս աստմկորիս վրայ,  
Միրո տէրն ամ ի՞նչ կու շահի.  
Ըռուա մի վաճառ կանէ  
Ու հազար դեկան կու զենի.  
Ելնէ հօր ու մօր աչից,  
Միրելեացն ամօթն աւելի.  
Թափի յերեսի ջրէն  
'Ի իր ոսկի անուոն աւիրի (Ա/ԾԸ, 77-85, Ա/ԶԳ, 988-995):*

Միրո տերը ընկնում է ծնողների աչքից, կորցնում է ամօթը և ավերում իր ոսկի անուոնը: Մա ավելի շատ հատուկ է սիրահարված աղջկան, քան տղային:

*Ի՞նչ անես, կամ ի՞նչ լինամ,  
Կամ թէ ի՞նչ ունիմ կատարած.  
Հա յ վախ, զիմ սիրած մանչն  
Ձէտ կատղած շունն զիս իխած.  
Կանգուն մի դանակ ունէր,  
Անողորմը մա զիս իզարկ.*

*Ո՛չ ինքն յԱստուծոյ վախաց,  
Ո՛չ յիշեց օր մի աղ ու հաց (Ա/Կ, 161-168, Ա/ԶԳ, 964-971):*

Սիրած մանչը ինչպես կատաղած շուն խածել է սիրեցյալին, որի գարնանքն ու գանգատը հայրենի մեջ արտահայտվել է կնոջ կողմից:

*Գիշերն ես ի քուն եի՝  
Իմ հալալ տեղացն ի վերա.  
Լուսինն էր կամար կապեր՝  
Իմ ճոհար անձկանս ի վերա.  
Իմ եարն յերազիս եկաւ  
Ի սիրուն գէտ հարքած եղա.  
Յանկարծ ի քնուս ելա,  
Լուսինկա ու խիստ կու ցոլա (Ա/Կ, 231-238):*

«Իմ հալալ տեղացն» և «ճոհար անձկանս» արտահայտությունները վկայությունն են այն բանի, որ հայրենի հեղինակը կին է:

*Եկոյ գրեզ ի ծոցս առնում,  
Տեղ շինեմ կրծոցս վերայ.  
Ծոցս քեզ սեղան քաշեմ,  
Ծիծս բարձ՝ էրեսդ ի վերայ.  
Կոճկիկս թուլիկի կոճկեմ,  
Որ հոգիս ի ծոցիկս ելնայ. (Ա/ԿԳ, 49-54):*

Այս հայրենը ակնհայտ կնոջ կողմից երգված վայելքի հայրեն է, ուր անկաշկանդ ու քաց պատկերներով կինը հրավիրում է իր սիրած տղային՝ իր ծոցն առնելու, կրծքի վրա տեղ գցելու, իսկ ծիծը՝ բարձ անելու: Այստեղ ավելորդ չենք համարում վկայակոչել Հովհան Մանդակունի կաթողիկոսի «Ասն անօրէն թատերաց դիւականաց» ճառից մի հատված, որը խոսում վկայությունն է այն բանի, որ մեզանում հնուց ի վեր գոյություն են ունեցել գուսաններն ու նրանց վայելքի ու խրախճանքի երգերը. «Ձի չար է սովորութիւնն, չար են և յորդորիչք նորա՝ զինի և գուսան և սատանայ, և միտք մոլորեալք ցոփագնացութեամբք և յափրանօք վաւաշոտութեամբք, որք կամայօժար և դիրահաւան ընդունին զչար սերմանս սատանայի, մանաւանդ թեթևամիտ և շուաղաբարոյ ազգն անհամեստիցն կանանց, երագալուր և դիրահաւան և վաղապատիրք...» (տե՛ս «Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության», աշխ. Պողոս Խաչատրյանի և Հակոբ Զոյսեյանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 137): Իսկ վարձակների՝ կին գուսանների մա-

սին, ինչպես վերևում նշեցի, հիշատակություն է թողել դեռևս Մովսես Խորենացին:

*Թող լուռի շապկիկ հագնեն*

*Ու շրջիմ գետ սրգատրի.*

*Ձկոճկիկն այլ արծակ թողում,*

*Որ տեսնու՝ սիրտն նուաղի (Ա/ԿԴ, 25-28):*

Այս հայրենի մեջ էլ կինը շապկիկի կոճակները արծակ է թողել, որ տեսնողի սիրտը նվաղի վայելքի ցանկությունից: Անշուշտ, այսպիսի երգերի մասին է Մանդակունու բարկացկոտ ճառը, որով գուսանների արվեստը՝ որպես աշխարհիկ մղումների ու ցանկությունների արտահայտություն, մերժել է՝ ի շահ քրիստոնեական պարկեշտության:

*Ես իմ հորս հետ կռուեմ,*

*Թե՛ Գնա՛, պարտքիդ ճար արա:*

*Մայրս քեզ աթոռ դրնէ,*

*Դու նստիս գինչ բարձր ամիրայ.*

.....  
*Ձեռքըդ բռնեմ, ներս տանեմ,*

*Դուռըն դրնեմ, փակն ի վրայ (Ա/ԿԶ, 11-18):*

Աղջիկը կոպում է հոր հետ իր սիրած տղային առնելու համար, իսկ մայրը աթոռ է բերում, որ փեսացուն նստի՝ իբրև ամիրա, ապա ձեռքը բռնած ներս է տանում աղջիկը սիրած տղային, փակում է դուռը, որից հետո էլ սկսում է վայելքի հետևյալ երգը.

*Ապրիշում խալի կը ձգեմ,*

*Ոսկեթել դոշակ ի վրայ:*

*Բարձրիկ մի սեղան բերեմ*

*Ու խորված կաքվուկն ի վրայ.*

*Շիշա մի գինի բերեմ,*

*Որ խմենք ի սիրոյ վրայ:*

*Հագնիմ գիմ շարէ շապիքս,*

*Որ շամամ ծծերս երևայ.*

*Բանամ զարծաթէ վնառեսն,*

*Մուտ ի ներս ու տավրան արայ (Ա/ԿԶ, 19-28):*

Խալի ու ոսկեթել դռնակ է փռում, սեղան է բացում, զինի բերում, որ խմեն սիրո կենացը, ապա հագնում է շապիկը, որ կուրծքը երևա ու կանչում է իր ծոցը, որ կյանք վայելեն: Կնոջ կողմից հնչած վայելքի ու ցանկության անկաշկանդ մի զգացում է արտահայտված այս հայրենում, որի հեղինակը միայն կին կարող է լինել: Անշուշտ, տղամարդը չէր ասի. «Հագնիմ զիմ շարե շապիքս, Որ շամամ ծծերս երևայ...»:

*Դիժար հիւրնդուկ եմ ես,  
Առ խնձոր, արե՛կ, զիս ի տես.  
Հագար զենեհար կու տամ,  
Որ օտար հաքիմ չբերես.  
Օտար հաքիմն ի՞նչ անես,  
Ձիմ ամեն տարտս դու գիտես.  
Եկո՛ւ, տամ ծոցուս բալնին,  
Բաց սրտիս դուռն, մուտ ի ներս (Ա/ԿԷ, 29-36):*

Սերը մի յուրահատուկ հիվանդություն է, որի բուժումը ոչ մի հեքիմ ու բժիշկ չի կարող գտնել, ուստի սիրահարված կինը ծանր հիվանդացնում է և դիմում սիրածին, որ խնձոր վերցնի ու գա իրեն տեսության. այս դեպքում խնձորը սիրո նշան է, դա է պատճառը, որ նա հորդորում է յարին՝ օտար հեքիմ չբերի, քանի որ զիտի իր դարդ ու ցավը, որի սպեղանին սիրած տղային իր ծոցի բանալին հանձնելն է: Սիրո հիվանդության դեղը, ըստ էության, սիրած էակին վայելելն է, որին հիվանդագին ձգտում է ցանկացած սիրահար, այս հայրենում՝ սիրահար երգչուհին:

*Այ իմ հատառիկ Աստուած,  
Չձգես ի ձեռն սիրու.  
Թէ ձեռն սիրու ձգես՝  
Մի՛ ձգեր ի խալխի լեզու.  
Թէ խալխի լեզու ձգես՝  
Ձիմ մահուն օրըն մօտեցու.  
Գլուխս դնեմ, մեռնիմ,  
Որ չգայ երեսս ամօթոյ. (Ա/ԿԸ, 179-186):*

Սիրո տեր դարձած աղջիկը գրավում է միջավայրի ուշադրությունը, դառնում բամբասանքի առարկա, ուստի դեռահաս աղջիկը խնդրում է Աստծուց, որ իրեն սիրո տեր չանի, հակառակ դեպքում ինքը ժողովրդի կողմից խոսակցության նյութ կդառնա և կմոտեցնի իր մահվան օրը, սակայն գերադասում է մեռնել, քան արժանանալ ամոթանքի. տղամարդն

այսպես չէր մտածի, սա կնոջ հոգեբանության դրսևորում է, հայրենն էլ ասված է կնոջ կողմից:

*Գիշերս ես ի քուն էի՝  
Յիմ հալալ տեղացն ի վերայ.  
Լուսինն այլ կամար կապեր՝  
Յիմ ճօհար անձկանն ի վերայ.  
Իմ քարծր ու բոլոր լուսին,  
Շատ քարն տար խօշ իմ եարին.  
Ձղումն այլ նշանով ասեմ՝  
Բարձր պատ ու ծառն ի միջին.  
Նստեր է ծառին շքին,  
Կու խմէ զհյր լուրջ ապիկին.  
Կու խմէ ու հայրեն կասե,  
Թ՛ Ի նշ անուշ է սերն ու գինին (ԱԶԳ, 485-496):*

Այս հայրենն էլ ԱԿ, 231-238 միավորի սկսվածքով, սակայն ուրիշ շարունակությամբ զարգացող տալիերակ է, որի հեղինակը կրկին կին է, ինչպես ԱԻԸ, 23-26 հայրենի սկսվածքով ստորև բերված հայրենը, որն ունի հետաքրքիր շարունակություն և նորովի է հաստատում այն փաստը, որ այս դեպքում բացառվում է տղամարդ հեղինակը:

*Ես ծիծրունիկ պիտէի,  
Բունս ի ձեր տունըն դնէի.  
Չազ հանի՝ ճըմվռայի,  
Ու սիրովդ կշտանայի.  
Վաղվնէն մինչ իրիկուն  
Ի երեսդ ի վեր հայէի.  
Իրիկունն, երբ որ մթնէր՝  
Գայի, քո ծոցդ մտնէի.  
Գիշերն մինչոր լուսանայր՝  
Ես ի քո ծոցդ պառկէի.  
Երբոր առաւօտանայր՝  
Ես ի բունս ճըմվռայի.  
Երբոր լուսն լուսանայր՝  
Աշխարհիս վերայ ժուռ գայի (ԱԿԱ, 36-49):*

Բոլոր դեպքերում էլ զգացվում են կնոջ հոգեբանական մտեցումները, կանացի ներաշխարհի յուրովի արտահայտությունները, սիրելու և սիր-

վելու պահանջը, վայելքի անկաշկանդ ցանկությունը՝ սիրած տղամարդուն ծոցն առնելու համարձակ առաջարկով, ծագ հանելու՝ երեխա ծնելու երազանքը, որոնք խորապես կանացի մտածումներ ու հույզեր են, որոնք արտահայտվել են ոչ միայն հայրեններում, այլև ժողովրդական խաղիկներում և անտունիներում:

*Լուսիկ բոլորեր ' ի եկեր,  
«Ես ի քու խարիստ ի նման»:  
Խպնէ՛ ու ամչնէ՛, լուսիկ,  
Ո՞ր տեղտ իմ խարիստիս նման.  
Խարիստ բուխ աչք ունէր,  
Թուխ յունէր ու շուշման քերան.  
Շրթունք շուրթեղէն ունէր,  
Արմաթել պեխերն ի վրան (Դ/Գ, 245-252):*

Այս անտունին ևս գալիս է հաստատելու, որ կինը մշտապես արտահայտել է իր հույզերն ու ցանկությունները երգի միջոցով: Հայրենները, նաև ժողովրդական երգի տարբեր ժանրերը մշտապես ունեցել են իրենց կին կատարողները, որոնց մասին հիշատակություն է թողել Մովսես Խորենացին դեռ Ե դարում: Իսկ ավելի ուշ դարերում հանդես են եկել նաև առավել հայտնի կին երգիչներ, ինչպես, ասենք 19-րդ դարում Զուլուն (տե՛ս Մ. Աբեղյան, հ. Բ, էջ 370-371): Ասվածը մեկ անգամ ևս հավաստելու համար բերենք մի ժողովրդական խաղիկ, որով ավելի պիտի ամբողջանա պատկերը:

*Հաց եմ թխել գաթացու,  
Իմ յարն է մելիքացու.  
Գեղումն օխտը տղա կա,  
Իմ յարի նոքարացու (տե՛ս Մ. Աբեղյան, հ. Բ, էջ 288):*

Կամ բերենք մի ուրիշ խաղիկ, որի հեղինակը սիրահարված աղջիկն է՝ մտահոգ իր սիրածին հանդիպելու համար:

*Ա՛յ տղա, խաղով արի,  
Ոտներդդ շաղով արի.  
Մեր թաղը դալմաղալ ա,  
Դու վերին թաղով արի (տե՛ս նույն տեղում, էջ 290):*

Այսպիսով՝ նոր բան ասած չենք լինի, եթե նշենք, որ հայոց կյանքում դեռ վաղնջական ժամանակներից եղել են կանայք, որոնք երգել են ինչ-

պես խնջույքի և ուրախության, այնպես էլ լալիքի երգեր: Վարձակները հիշատակված են մեր մատենագրության մեջ՝ որպես կին գուսաններ ու երգիչներ: Կանայք երգել են ինչպես խաղիկներ ու անտունիներ, այնպես էլ հայրեններ: Կանայք գուսանական երգերի կատարման հարցում գրեթե չեն զիջել տղամարդկանց: Նշված երևույթի այժմյան մի կենդանի վկայությունն է գուսան Լեյլին, որը մեր ժամանակակիցն է: Արդ՝ ինչպես չընդունենք կին երգիչների գոյության փաստն այն դեպքում, երբ հայրենների երգաշխարհում, ինչպես վերևում տեսանք, կան այնպիսիք, որոնք անհնարին է համարել տղամարդու կողմից երգված:

Ուրեմն՝ հայրենները Քուչակին վերագրող բանասերները կանգնած են մի դժվարին խնդրի առաջ ևս. կա՛ն այս դեպքում պետք է ընդունեն, որ Քուչակը կին է եղել, որն առնվազն տարօրինակ կլիներ, կա՛ն պետք է ի վերջո հրաժարվեն հայրենները Քուչակի ստեղծագործությունը համարելու թյուր կարծիքից: